



ԱՌՈՒԲԵՆ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՂՈՒՄՅԱՆ

ՄՈՒՂՆՈՒ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳՐԵՐԸ

Պատմական Արագածոտնի գավառի հինավոր գյուղերից մելք՝ Մողենին, այժմ Աշտարակ քաղաքի հյուսիսային թաղամասն է:

Վաղեցական ժամանակներից պատեղ եղել է մատու չար ուժերին հաղթող, արդարության սատարիչ, «քիրիլիական հերուսերին» հիշեցնող ազատարեր ու ուազմիկ¹, սրբացված ասպետ Գևորգ գորավարի մատների վրա:

Հին, խարիսու, արտաքին ու ներքին փայլց զորք փոքր մատուք ԺԵ դարի կեներին քանդում է Մարտիրոս Մողենեցին, կառուցում շրջապարհին, թնակելի տներ, խոցեր «և եկեղեցի վայելուշ ի մէջ պարսպին ի վերայ չորից սեանց»²: Նույն միտքը երկրորդերու Զաքարիա պատմագիրը նորակառուց շինությունը համարում է «կոպակի քարի հոյակապ եկեղեցի»³: Սակայն Մարտիրոսաշեն եկեղեցին երկար կյանք չունեցաւ: Այս մասին տեղեկացնում է Դավիթեցոց ավելի ուշ, 1687 թ., իր պատմությունը շարահարած Զաքարիան, իսկ վաճառի որմերին վիմագրված ընդարձակ հիշատակությունները համակողմանիորեն լրացնում են նրա կառուցման մանրամասները:

¹ Միքարքի Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 86, 89:

² «Պատմութիւն Առաքել Վարդապետի Դարիմեցու», Վաղարշապատ, 1896, էջ 350:

³ «Զաքարիայ սարդապահ պատմագրութիւն», Վաղարշապատ, 1870, հ. III, էջ 41:

Մարտիրոս եպիսկոպոսը մահանում և թաղվում է իր ձեռակերտ եկեղեցու մոտ՝ իրեն հաջորդ թողեներով եղբոր՝ Հակոբի որդի Հովհաննես վարդապետին: Վերջինն, թերևս նկատի ունենալով, որ երկնալոյն Արագածի վեշտերին ազդապյուների նման հողին կատանված, ստանակի նման շղզողացող Կարմրավորի, Հովհաննավաների, Սաղմոսավաների, Ամբերդի, Տեղերի և շրջակա այլ քերթությունների օղաշղթայում խեղութ ու անարտահայտիչ է իր հաստատությունը, անվայել իր հոկ անվանը՝ մերուսության անմնացորդ մարմնացում Գևորգ գրավարին, քանդում է իր հորեղբոր կառուցած կոպտաքարե եկեղեցին «և շինեաց կոփածու քարամբը եկեղեցի զարմանափի, և յարևմտեան դրան զանգակատում»⁴:

Մրանով ավարտվում է ժամանակակիցների հաղորդումները Մողենու և Գևորգ եկեղեցու կառուցման մասին, քայլ, քարերախարաք, տաճարի որմերի, դոների արձակագրությունները հավաստի կերպով լրացնում-ամրողացնում են նրա կառուցման, վերանորոգման հանգամանքները: Եկեղեցու արևմտյան ճակատին, մուտքի ճախ, սյունասրանի որմեանուցերը միմյանց կամարի տակ փորագրված ընդարձակ տարեգրության հավաստմամբ, Հովհաննես վարդապետը, Հակոբ Զուղայնցի կաթողիկոսի թուլլտվությամբ ու օժանդակությամբ, Պարսից փոքր Շահ Արասի թագավորության և Արաս դուխի խանի բրո-

⁴ Նույն տեղում:

նակալության (այս դեպքում՝ իշխանության) ժամանակ, 1664 թ., «քակեալ ի հիմանց սուրբ Գէորգավ եկեղեցիս» և «հրաշակերտ յօրինուածօք, ներքուատ ու արտաքուատ կոփածու քարօք» շինում է ներկա եկեղեցին ու պունարարմը՝ իր և տեղի ժողովրդի հյութական միջոցներով։ Եկեղեցու կառուցումը հիմնականում պարտվում է 1669 թ., Չահ Սուլեյմանի թագավորության և Սեֆի ղովի խանի տիրապետության ժամանակ։ Նույն տարում էլ մահանում է Հովհաննես Վարդապետը, իսկ տաճարի ներսի «դօշամեն»՝ սպահատակը ու ծածկի սալարկումն իրականացնում է նրա հաշորդ և եղբոր՝ Կարապետի որդի Դավիթ Վարդապետը, և նրա կառուցումը, ամենայն հավանականությամբ, ամբողջովին ավարտվում է 1670 թ.։

Եկեղեցու կառուցման մեջնասներից է նաև Դավիթ Վարդապետի եղբայր պարոն Վարդանը։ Նա է տվել Եկեղեցու հարավարևելյան այս և մեկ կամարի «խարճ»՝ ծախսը՝ ի հիշատակ իր ծնողների՝ Վարդապետի և Թուրքանի, եղբայրների՝ Զաքարիայի և Մարգարեի, նրանց կանանց, զամակների և տոհմակիցների։ Նույն կամարի վրա էլ 1670 թ. փորագրվել է համապատասխան արձանագրություն։

Իր դարի համար նշանավոր ու ծավալուն այս ձեռնարկմանը զորավիգ են եղել նաև Սգովիսի ժողովուրդն ու իրենց հովվագետ Պետրոս Վարդապետը։ Նրանց խնայողություններով, ի հիշատակ Գողյան գավառի արքապիսկոպոս, նույն Պետրոսի հորեղբայր Խաչատորի, կառուցվել է Եկեղեցու արևմտյան շքամուտքը՝ երկնքատակ կամարներով հանդերձ՝ համաձայն նույն մուտքի ճակատակալի արձանագրության։

Այնուհետև մեկուկես դար տաճարը գոյատևում է անխաթար։ 1830 և 1839 թթ. վանքի առաջնորդ, գիտնական Ստեփանոս Թելավեցի արքապիսկոպոս նորոգում է ծածկերը և կայծակնահար կաթողիկեց։ 1866 թ. աշտարակեցի Սիմեոն Սաժումյանը, Ներսես 5-րդ կաթողիկոսի հրամանով, կարգվում է ս. Գևորգ Եկեղեցու տեսուչ, իսկ 1868 թ. Գևորգ Դ-ի հրամանով՝ հոգաբարձու։ Եվ քանի որ Սույնին Էջմիածնի թեմական գյուղներից էր⁶, ուստի կաթողիկոսության միջոցներով 1868 թ. Սիմեոնը

վերանորոգում է Եկեղեցու տաճիքները⁷։

Սույնու վանքում հնուց ի վեր եղել է դպրոց և գրչատուն։ Այստեղ 1023 թ. Սիմեոն գրիչը շարագրել է մի «Ծաղընտիր»⁸, իսկ 1491 թ. Մկրտիչ երեցը, Սիրադեղ աղայի պատվերով՝ «Ծաղոց»⁹։

Սույնու վանքի առաջնորդ Արել Միհրայան եախնկոպուը 1870 թ. տեղում վերաբերել է Արարատյան աշխարհի սակավաթիվ դպրոց-վարժարաններից մեկը¹⁰, որտեղ ուսանում-կրթվում են նայ մանուկները։

Սույնու ս. Գևորգ Եկեղեցին կառուցել է քարահատ, ճարտար ուստա, մելմար-պետ անվանյալ Սահակ Հիզանցին։ Մինչ այս, 1654—1658 թթ., վասպուրականցի Սահակը, իր քրոջ տղա, ուստա Մովսեսի և ուկերիչ Զաքարեի հետ, կառուցել էր Եջ-



Նկ. 1. Տաճարի տեսքը հարավ-արևմուտքից

միաձնի Մայր տաճարի գլխավոր զանգակատունը։ Եվ ահա ճանաչման արժանացած ճարտարապետը՝ 1664 թ. ստանձնում է

⁷ Եկեղեցու ծածկերը և նախագավիթ-սրանը անձնագետ վերանորոգել է Երևանցի, հանգույցալ վարպետ Սովուն Գյուղենյանը 1870 թ., իսկ նրա հարավից կառուցների, պարիսամների նորոգումը և բարեկարգումն իրականացվել է ՀՍՀ Պետչին Հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության Երևանի հիմնադրման (Երերուն) թանգարանի միջոցներով, 1978 թ.։

⁸ Գարեգին Ա, Կաթողիկոս, Յիշատակարանք ձեռնադրաց, Բ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 213։

⁹ «Ժ- դարի հայերն ձեռագրերի հիշատակարան, Եղբ», մասն Գ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 167։

¹⁰ Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 184։

⁵ «Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և Թիֆանական գաւառացն Արարատյա, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի՝ Չահ-Խաթունեամց Շահիարցույ, միաբանի սրբոյ Էջմիածնի», Բ. 2-րդ, Էջմիածն, 1842, էջ 94։

⁶ Նույն տեղում, էջ 80։

Մոլոր եկեղեցու կառուցումը, սակայն, ձեռնարկության թերավարության 1667 թ. գար հանձն մահանում է: Սահմակի դիմ ամփոփված է գոյուի հյուսիսային եզրի գերեզմանոցում¹¹:

Եկեղեցու կառուցումը շարունակում ապահով է Սահմակի փետակ և աշակերտը, շնորհապի ուստա Մուրադը:

Սահմակ ճարտարապետն իր ձեռակերտի ծավալա-տարածական հորինվածքի և արտաքին հարդարանքի մեջ օգտագործել է միջնադարական հայկական ճարտարապետության բավականյան համար և դարձնել է թողելի հետագա շրջանի եկեղեցություն է թողելի հետագա շրջանի եկեղեցական ճարտարապետության վրա:




Նկ. 2. Գմբեթակիր կամարները

Մոլոր եկեղեցին Զ—Է: Դարերին ընդուց գմբեթավոր սրան է: Գմբեթը, որը տեղադրված է կենտրոնից համամասնաբար արևմտաք, բարձրանում է չորս սրբաները միմյանց կապող կամարների և նրանց միջև գոյացող առագաւտների վրա: Թմբուկը կլոր է, ոև ու կարիքի տուֆաքարեն հաջորդական շարքերով: Եկեղեցին լավ է լուսամորթությամբ արևոտքությամբ, առաջնային մասունքը կամարների տակ, խորաններ չկան (ինչպես Էջմիածնի Մայր տաճարում, և Գայանե եկեղեցում, Պողոսիում, Արուճում, Թալինում և այլուր), և եկեղեցու ներսի ողջանման մասնաւում է չորս հզոր մույթերով: Ծասմուռը բացվում է պահ-

թմբուկի վրա, աշխարհագրական կողմերի համեմատ հարավ-արևելքից հյուսիսարևմտաք խիստ շեղված, ավետարանիչների խորհրդանշից բարձրաքանդակներն են: Նման հնարամիս տեղադրմամբ դրանք օրվա ընթացքում ամրողովին լուսավորվում են: Ի տարբերություն այլուր գոյություն ունեցող համասնան բանդակների, պատեղ

¹¹ Այս մասին ավելի մանրամասն տես մեր «Երբ և ովքը են կառուցել Էջմիածնի Մայր տաճարի գանգակատուն» նովվածք, «Էջմիածն», 1976, № Ե, էջ 30—32:

գրված են նաև ավելացրանիշների անունները: Ի դեպ, բարձրորժան հետևանքով այց քանդակները գտնվին վրայից հազվակ են հշմարվում: Թմբուկի նկատվածությունը բուրգ մեղաքը հովհարանն է՝ Անիի, Մարմաշենի, Ամբերդի, Տաթևի, Գլածորի կառուցների օրինակով: Ավագ խորանին կից ունի բաղակապ կրկնահարկ փոքր ավանդաններ, որոնցից հյուսիսայինում ամփոփվել են և Գլուքի շշաբարք-մասներները, իսկ հարավակողմում պահպանվել են պատարագանուոց սպասքներն ու անորները: Խորանների 2-րդ հարկի թաքստոցները հնարաւոր է մագլել-բարձրանալ գլխավոր արսիդայի աջ ու ձախ կողմին փոքր հիշաներով: Այդ հիշաններից վեր են ձգվում կլոր խոռոչներ՝ 6—8 մ բարձրությամբ, պատերի մեջ տեղադրված աստիճաններով, որոնց օգնությամբ կարելի է հսկել մուայլ, խավար ու պատ թաղակապ խորան-թաքստոցները: Այդ հոսանքի պատսպարաններն ունեցել են քարե միակույր, շարժական դրներ, որոնք հիշանների համար ծառայել են որպես առաստաղ և թաքցրել գաղտնի մուտքերը: Արևմտյան հատվածում, թաղակիր կամարների տակ, խորաններ չկան (ինչպես Էջմիածնի Մայր տաճարում, և Գայանե եկեղեցում, Պողոսիում, Արուճում, Թալինում և այլուր), և եկեղեցու ներսի ողջանման մասնաւում է չորս հզոր մույթերով: Ծասմուռը բացվում է պահ-




Նկ. 3. Հատված սրան-նախագավթից

նախագավթի մեջ, մի այլ մուտք է՝ հարավային ճակատից: Մոտքերն ունեն փայտակերտ դրներ՝ պատրաստված 1838 և 1839 թթ. կենացենց Գլուքի տոհմի հիշատակին: Զախ խորանի դրան կաղնի փայտը ներծծված է ձերթով և փառքիլում է լավագույն կահույքի հնան:

Մոլոր տաճարի նախագավթ-սրանի իր մտահղացմամբ նոր տարր է եկեղեցաշինության մեջ, որն այնունետև լաւ տա-

րածում ստացավ¹²: Նրա եռարաժին թաղը նստում է արևմտյան չորս պունքերի և տաճարի պատին հենած որմնամույթերից ձգվող կամարների վրա: Կենտրոնական մասում, Հովհաննավանքի օրինակով բարձրանում է թերևս 12 առաքյալները խորհրդանշող 12 կոր, միակուր պունքերի վրա հանգչող զանգակատունը: Եկեղեցին և սրբ-նախագավիթը¹³ շրջաված են մեծավալ, հոկտեմբերի 12 առաքյալները խորհրդանշող 12 կոր, միակուր պունքերի վրա հանգչող զանգակատունը: Եկեղեցին և սրբ-նախագավիթը¹³ շրջաված են մեծավալ, հոկտեմբերի 12 առաքյալները խորհրդանշող 12 կոր, միակուր պունքերի վրա հանգչող զանգակատունը:



Նկ. 4. Սահմանատան տեսքն արևելքից

հակոտների լուսամուտների շրջաքանդակները, պունքերի ու որմնամույթերի խոյակների ստալակտիտային քանդակները, հովհարան վեղարը, թմրուկի բարձրաքանդակները, բռնական և կրոնական մոտիվներով որմնանկարները, պատերին ագուցված խաչքարերը և որմերի վիմագրությունները:


¹² Այս իր կոմպոզիցիայով չի կրկնում Սահմանականի նախագավթին, և նրա տարրերի ակունքները պետք է որոնել հանրահայտ գալիքների ու զանգակատների մեջ:

¹³ Եկեղեցու վիմագրերի մեջ այս պունքարարը, անհողություն, կոչվում է զավիթ, Զաքարիա պատմիչի մոտ՝ զանգակատուն:

¹⁴ Անվառան պետք է ասել, որ երկգոյն տուֆով շրջաված հուշարձանն առանձնակի հմայք ու արտահպատականություն է ստացել: Մեր ճարտարապետություն նոր-նոր սկսել են օգտագործել հայկական գունավոր քարերը՝ իրքն կառուցների հարդարանքի, հնագործման բնաւորությունը ու մշտակաց միջոց:

Վանքից հյուսիս՝ պարսպին կցված են թաղակիր բնակելի սենյակներն ու երկրածին սեղանատունը:

Մուղնու եկեղեցու որմերից և նրա մերձակայքից մենք հավաքել ենք 27 արձանագրություններ, որոնցից հինգը հրատարակված են եղել անցյալում: Ստորև ներկայացնում ենք բոլոր արձանագրությունները՝ որոց շտկումներով վերահրատարակելով նաև հայտնիները: Սուածին անգամ հրատարակում ենք մի քանի մասն արձանագրություններ Քանաքեռից, Փարպիից, Սւամից, Էջմիածնից, Հացառատիից, որոնք լրացնում են Մուղնիում հանդիպող քարգործ-վարպետների գործունեության անհայտ էջերը:



Նկ. 5. Կենտրոնում 986 թ. խաչքարը, աջ կողմում՝ Սեղիսեթի հորինած

Մուղնու նախանկան կառուցների վերաբերյալ մեզ ոչ մի վիմագիր չի հասել: Տեղում գտնված հնագույն արձանագրությունը 990 տարի առաջ հորինված խաչքարի ստորին մասում է: Պարզ ու անպանույն այդ կութողը, երկու այլ խաչքարերի հետ, վերջին վերանորոգման աշխատանքների ընթացքում կանգնեցվել է սեղանատան արևելյան պատի տակ, ընդհանուր պատվանդանի վրա: Ահա նրա վիմագիրը¹⁵ (գծ. 1). Նև (986) ԹՎ. ԵՄ ՏԻՐԱՆ, ԾՆՈՒՅ ԱՐՏՈՒՐ-ԾՈՒՅ, ՈՐ ԿԱՆԳՆԵՑԻՑԻ ԶԼԱՉՍ/ Ի ՅԱԳՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԻՆՉ ԵՒ ԶԱԻԱԿԱՑ ԻՄՈՅ. ՈՐ ԵՐԿԻՐՊԱԳՆԵՑ /ԶՔՐԻՍ-ԾՈՅՍ ՅԱՂՈՐՄ ՑԻԾԵՑԻՑ:

¹⁵ Արձանագրությունն առաջինը հրատարակել է Ա. Շամինյանը (Տե՛ս Արա «Հայկական խաչքարերի արվեստը», «Էջմիածն», 1980, № Զ, էջ 47): Նա առաջին տողի անձնանունը վերծանել է ՄԻՐԱՆ-ի, որը և մուել է հայագիտական մի եզակի ու բարձրարժեք աշխատության մեջ (Տե՛ս Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչունարանություն,

Եկեղեցու ձախ խորանի արևելյան պատի մեջ, ներքոստ, ազգությած է մի խաչքար: Այլ նպատակով նորինաված խաչքարի քիվը տաշվել է պատին հավասարեցնելու համար, ասկային բարերախտաքար փրկվել է թիվը և վարպետի ստորագրությունը՝ փոքրագրված խաչքանդակից վերև (գծ. 2). ԹՎ. ՌԽԸ (1598). ՀԵՌՍՅՊԵ[Տ] ԿԱՅՁՄՊՈՂ: Այս վարպետի ձեռակերտ խաչքարերից մյուսը ազգությած է աջ խորանի նոյն մասում (գծ. 3). ԹՎ. ՌԽԸ (1599). ՀԵՌՍՅՊԵ[Տ] ԿԱՅՁՄՊՈՂ Բիշաստակությամբ: Նոյն խորանի հյուսիսային հիշայի մեջ դրված խաչքարը ևս կարելի է վերագրել Հերապետին, թեև ճրա վրա վարպետի ստորագրություն չկա: Խաչքարի վերին կամարադեկի վրա փորագրված է (գծ. 4). ԹՎ. ՌԽԸ (1598)¹⁶:

10—14-րդ դր., Երևան, 1973, էջ 347): Մեր կարծիքով առավել հավանական է անձնանվան Տիրան ընթերցումը: Հին խաչքարերի առույգ թվագրությունների մեջ այս տիպի կրթողական հուշարձանների զարգացման պատմության համար: Սույնը մեծ չէ թվակիր մին խաչքարերի քանակը:

Մենք գտել ենք մի քանիսը ևս, որոնք են՝ ա Վարդենիսի շրջանի Թուսկրով գրուի բաղիկներուն հյուսիսային պատի տակ ընկած է երկառված խաչքար՝ պարզ ու խոշոր խաչքանդակով, ընդարձակ, բայց ծեծված-ջարդությամբ, շամբողջացող արձանագրությամբ: [ԹՎ.] ՆԼԸ (989). Ես ՄԱՐԴԱՆ ՈՐԴԻ ԽՈՌԱՆ ԶԱԼԱ Եի թո՛՛ ... Եի ԿԱՆԳՆԵՑՑԻ ԶԽԱԾՎ ՑԱՆՈՒՆ...

Ի նոյն շրջանի Կարճադրությունը գրուի «Քարե դուռ» կից մասուններից հարավային արևելյան պատին մենած խաչքարի եզրերի և ստորին մասի արձանագրության որոշ հատվածներ ծածկվել են, ասկան ներքեւ մասում հնարավոր է կարդալ:

Թ. ՆԸԸ (1009) ... ԵԽՈՒ ԿԱԳԵՑԻ:

զ Հիշյալ մասուններից արևմտուր՝ ձորաեզրին ընկած խաչքարի եզրերին ի թվ. ՆԶԴ (1035) ԶԽԱԾՎ ԱՐԴԵ... ՈՐԴԻ ԻՄ ՄԱՐԿՈՍ ՔԱԶՄԱՆԻՆ ԱՂԱՍԻԹՄ ՑԻԵՑՑԵ[Ք]. ԽՍ. ՉԻԶ ԳՈՐԾՈՂՎ...

դ Մարտունու շրջանի Զորագյուղի Մասրուց անպատ (ս. Կարապետ) եկեղեցու շրջապատի ավերակութերից հնանակ և նոյն տեղում վերատեղադրված խաչքարի շրջանակներին՝ [ԹՎ.] ՆԼԸ (989). ԱՂԱՆԻԹՄ... ԳԻՌՈԳ ԵՐԵՑՈ:

ե Նոյն տեղում պահպանվում է կարմրավուն խաչքարի ասորին մասը՝ ԸԸ (1059) թվի կիսեղծ արձանագրությամբ:

¹⁶ Հրապան կազմողի խաչքարերից մեկը գտնվում է Քանաքեռում, Պետևանին որմնափակ խաչքարի նոր (Տես Կ. Ղաֆաղարյան, Երևան, 1975, էջ 211): Նոյն տեղի ս. Հակոբ եկեղեցու հյուսիսային պատի

Մուղնու տաճարի հարավ-արևելյան հատվածի մաքրման-բարեկարգման ընթացքում հայտնաբերվել է ԺԶ դ. առավել հանրահայտ քարզործ վարպետներից մեկի՝ Մելիքսեթի նորինած խաչքարերից մեկը: Այն այժմ դրված է սեղանատան արեւլյան պատի տակ, խորանախաչի վերին կողմում, եղնատան, գրված (գծ. 5). ՄԵԼԸ[Ի]Ք[Ս]ԵԹ ԿԱՅՁՄՊՈՂ¹⁷:

արևելյան մասում, դրսից, բարձրասա տևաղարված է մի այլ խաչքար՝ ՀԵՌՍՅԵ[Տ] ԿԱՅՁՄՊՈՂ՝ ստորագրությամբ, մի որիշը դարձված է Փարախի և Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու սեղանաբար՝ ՀԵՌՍՅՊԵ[Տ] ԿԱՅՁՄՊՈՂ մակարությամբ, իսկ Կարմրավոր եկեղեցու մոտ պահպանվող ՀԵՌՍՅԵ[Տ] կազմողի խաչքարը՝ նորինավել է ոչ թե ՌԽԸ—1591 (տես Ս. Բարխունյարյան, Միջնադարյան հայ ճարտարագուներ և քարզործ վարպետներ, Երևան, 1963, էջ 171), այլ ՌԽԸ—1598 թվին: Ժամանակագրուկան, տերիսության առում և ասացնորվելով խաչքարերի ոճական հմանությամբ, Քանաքեռում, Փարախիու, Աշտարակուն և Մուղնիում հանդիսակող Հրապան, Հրապան, Հրապան և Հրապան կազմողներին համարում ենք նոյն անձնավորությունը: Հրապանը ըստ արժանապահ պետք է տեղ ստանա հշանակոր հայ քարզործ վարպետների անդաստանում:

17 Մեր առանձին պրապումների ընթացքում հայտնաբերել ենք այս հշանակոր արվեստագետնի մի շաք խաչքարեր ևս: Դրանցից մեկը գտնվելու է իր գործունեության կենտրոնում՝ Կամոյի շրջանի Կարմրի գրուիում (հորինված 1550 թ.), իսկ երկրորդը ագուցված է Եջմիածնի ծիական եկեղեցու հյուսիսային պատին, որի թիվի և խաչքանդակի արանքում եղնատան հյուսիսական պատմական մասուն ՂՈՂԻ (¹⁸):

Մյուսը գտնվելու է Վարդենիսի շրջանի Ծիկազա գյուղի հյուսիսային եզրու, սվերակ եկեղեցու մոտ: Խոչոր խաչքարի թիվի արձանագրությունը վերծանել է Ս. Բարխունյարյանը (Տես ս. Երևան «Դիման հայ միմագրության», պատկ 4-րդ, Երևան, 1973, էջ Տ12), իսկ խաչքարանդակի նորինական թմբից վերև՝ բարձրապահանդակ տառերով գրված թվ. ՌԸ (1558) ընթերցել է ԹՎ. ՌԸ (1559): Նա չի մկանել թիվի և խորանախաչի միջի ներ գտու բարձրապահանդակ տառերով միջատակագրությունը՝ ՄԵԼԸ[Ի]Ք[Ս]ԵԹ ԿԱՅՁՄՊՈՂ: Հաջորդ երկու միջատակագրությունները պահպանվում են Երևանի Ավան թաղամասի պատմական գերեզմանոցի հարավ-արևմտյան եզրու: Այդտեղ ընկած բարձրապահանդակ խաչքարերի խորանախաչի ձախ կողմում ուղղություն, մեր տառերով գրված է՝ ՄԵԼԸ[Ի]Ք[Ս]ԵԹ ԿԱՅՁՄՊՈՂ], իսկ մյուս առաջինի խորանակագրությամբ կարմրավորն տապահարարի վրա է: Վերջինիս հյուսիսային ճակատին մարդու, ձիու, հայելու, գավի, միալուծ արորի, իսկ հարավային ճակատին՝ չորս խորանիկներ ու նորաց մեջ՝ խաչերի քանդակներն են: Խորանների կամարադեմների միջև հստակ կերպով ընթերցվում

Ահա սրանք են իին Մոլոնու վանքի տարածից մեզ Բասած Բիշատակությունները: Մնացած վիմագրերը վերաբերվում են Անդրկալումն գոյություն ունեցող Բուշարձանների կառուցման և հետագա ժամանակի զանազան խնդիրներին:

Մոլոնու և Գուրգ եկեղեցու կառուցողական ընդարձակ արձանագրությունը¹⁸ հետևյալն է (գծ. 6):

ա ԾՆՈՐՀՕՔ Տ[ԵԱՐ]Ն ԱՄԵՆԱԿԱԼԻ,
բ Ի ԹՎԿԻՆ ՈՒԺԴԳ (1664), Ի Թ[Ա]-
ԻՈՒՐՈՒԹԵՄ[Ա]Ն ՊԱՐՍԻՑ ՓՈՔՐ
գ ԾԱՀ ԱՊԱԶԻՆ ԵՒ Ի ԲՈՆԱԿԱԼՈՒ-
ԹԵ[ԱՆ] ԵՐԿՐԻՄ ԱՊԱԶ ՂՈՒ-
դ ԼԻ ԽԱՅԻՆ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒ-
ԹԵ[ԱՆ] ՀԱՅՈՑ Տ[ԵԱՐ]Ն ՅԱԿՈԲԱՅ
և ՍՐԲԱԶԱՅ Կ[Ա]Թ[ՈՒ]Ղ[Ի]Կ[Ո]ՍԻ
Ս[ՈՒՐ]Բ ԷԶՄԻՐԱ]ԾՆԻ, ՈՐՈՑ ՀՐԱ-
ՄՆԱԱՆ ԵՒ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄՄԲ ԹՂ-
ՊՈՎ, ԲԱՆԻԻ ԵՒ ԱՐԴԵԱՄՄԲ ԵՒ ԸՆԴ-
ՀԱՆՈՒՐ ՔՐԻՍՏՈՆԵՒՑ ՏՐԻՒՔ, ԸՆԴ-
ՆՄԻՆ, ԵՒ

է ԶԱՄ[ԵՆԱՅՆ] ԽՆՉԱ ԵՒ ԸՏԱՑՈՒԱԾ
ՀՈԳ[Ո]ՑՍ ԵՒ ՄԱՐՄՆ[Ո]ՑՍ ՎԱՏԵՑԻ
է Խճճից իմաստ չկազմո՞ւ ծ զ ի լ ֆ Վ լ ժ տա-
ռեր: Մեզ Բաջողութեաց բացել ապահի քարործի՝ Մե-
լիքսեայի անունը կազմո՞ւ գաղտնագիրը՝ եղբայրա-
գիր ծածկագրով, որն է

ԾԾԻԼՓՎԸԺ

ՄԵԼԻՔՍԵԹ:

Ի դեպ, օրսասորեա ավելանում է ոչ միայն Մալիք-
սեթի, այլ նաև նոյն դարի Բոչակավոր մի այլ քար-
ործի՝ Քիրամի ստեղծագործությունների թիվը: Նրա
նեագոյն ձեռակերտը մի փոքր խաչքար է՝ ագուց-
ված Էջմիածնի Հին Վեհարանի արևելյան պատին,
քարձուտա, քիվիճ՝ Ս[ՈՒՐ]Բ ԽՆՉԱ ԲԱՐԵՆՆԱ[Ր]Ս
ՈՒԼՈՒՆՆԱՆ[Ն], իսկ խորանախաչի երկու կող-
մում ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ, ԹՎ. ՈՒԹ (1580) մա-
կագրությամբ: Մյուսը գտնվում է Հացատափի մեծ
գերեզմանոցում, ճամապարհի եղին. դա քազային
փոքր տապանաքար է, որի հարավային լանջի և
խորանախաչի վերև գրված է՝ ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ: Ի
դեպ, ուշագրավ է, որ տապանաքարի մնացած երեք
կողերն անմշակ են, քանի որ այն պատրաստվել է
վաճառքի համար և պետք է լրացվեր ըստ գնորդի
նախասիրության: Քիրամի կազմած խաչքարներից
մեկը կանգնեցվել է Հակոբ Եպիսկոպոսի Բիշատա-
կին, Նորադուղում (Դիվան, պրակ 4-րդ, էջ 87),
որի տարեթիվը՝ ԹՎ. ՈՒՆԴ (1595) անձնատ է մաս-
ցել:

¹⁸ Այս արձանագրությունը Բրատարակել է Շահ-
խարտումյանը՝ անհշան վրիպումներով (տե՛ս Օրա «Ստորագրութիւն»..., թ. 2-րդ, էջ 92—93): Այն
նոյնությամբ վերաբրատարակվել է Բետագայում (տե՛ս Ալիշան, Այրարատ, էջ 188—184 և Վիմա-
կան տարեգիր, կազմեց Կ. Կոստանդնաց, Պետք-
րուգ, 1918, էջ 188—189): Ի դեպ, Կոստանդնացը
լուրովի սրբագրել-խմբագրել է Շահխարտումյանցին:

Ես ՅՈՎՀԱՅՈՒ[Է]Ս Վ[Ա]ՐԴ[Ա]Պ[Ե]Տ
Մ[ՈՒ]ԴՐԵՑԻ
ը ՈՐԴԻ Ց[Ա]Կ[Ո]ԲԱՅ, ԵՂԲՈՐ ՈՐԴԻ
ՄԱՍՏ[Ի]Ր[Ո]Ս ԵՊ[Ի]ՍԿ[ՈՊՈ]ՍԻՆ,
ՔԱԿԵՆԼ Ի ՀԻՄԱՆՑ Ս[ՈՒՐ]Բ ԳԵՈՐ-
ԳԱՅ ԵԿ[Ե]Ղ[Ե]ՑԻ ԵՒ ԾԻՆԵՑԻ
թ ԶԱՅՑ ՀԱՆԴՐԵՐՁ ԳԱԻԹՈՎԱՌ ՀՐԱԾ-
Կ[Ե]ՐԾ ՅՈՒՐՈՒԱՆՈՔ, ՆԵՐՔՈՒԱՏ
ԵՒ ԱՐՏԱՔՈՒԱՏ ԿՈՓԱԾՈՒԻ ՔԱՐՈՔ
Ժ ԵՒ Ի ԹՎԿԻՆ ՈՒԺԾԸ-ԻՆ (1669), Ի Թ[Ա]-
Գ[ԱԻՈՒ]ՐՈՒԹԵՄ[Ա]Ն ՊԱՐՍԻՑ ԸԱՀ
ՍՈՒԼԵՄԱՆԻՆ ԵՒ Ի ԲՈՆԱԿԱԼՈՒ-
ԹԵ[ԱՆ] ԵՐԿՐԻՄ ՍԵՖԻ
ԺԱ Ղ[ՈՒ]ՀԼԻ ԽԱՅԻՆ ԱԿԱՐՏԵՑԻ, ԵՒ ԵՍ
ԸՆԴ ՆՄՍ ԱԿԱՐՏԵՑԱՑ Ի ԿԵՆՑԱ-
ԴՈՅՑ ԵՒ ՓՈ-
Ժ ԽԵՑԱՑ ԱՌ Տ[Ե]ՐՈՒ ԱՄԵՆԻՑ. ՄՄԱՑ
ՄԻԱՑՆ ԳԼԽԻ ՍԱԼՔՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ
ԴՈՏԱՄԵՆ
Ժ ԵԿ[Ե]Ղ[Ե]ՑՈՅՑ ԵՒ ԳԱԻԹԻՍ, ԶՈՐՈ
ԿԱՏԱԿԱՆ ՅԱԿՈԲԱՅ ԵՐԿՐՈՒ
ՄԻՈՒ ԵՄ ԵՎ ԱՄԱՅ ՑԵՔ ԻՆ ԵՒ ԾՆ[Ո]ՂԱՑ
ԻՆՈՑ,
Ժ Տ[Ե]ՐՈ ԱՐՄՈՒԱ]Շ ԶԵԶ ՈՂՈՐՄԵՍ-
ՑԻ, ԱՄԵՆ: ԱԼԵՔՍԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՀԱՅՈՑ ՅԻԾ[Ե]ՑԵՔ Ի Ք[ՐԻՒՍՏՈ]Ս:
Արձանագրությունը կազմված է Հով-
հաննեա վարդապետի անունով, բայց նրա
մահից հետո:

Եկեղեցու արևմտյան շքամուտքի ճակա-
տակալ քարի արձանագրությունը (գծ. 7)
ավելուում է:

ա ԾՆՈՐՀՕՔՆ ԱՐՄՈՒԾՈՂՅՑ ԵՍ ՊԵՏՐՈՍ
ՎԱՐԴԱՊԵՏ, ՈՐ ՅԱԳՈՒԵԱՑ, ԱՆ-
ՋԱՄԲ ԵՒ ԺՈ-

բ ՂՈՎՐԴԵԱՄԲ ԻՆՈՎ ՅՈԺԱՆԴԱԿ ԵՂԵ
ԾԻՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՑ
գ ԵՒ ԾԻՆԵՑԻ ԶՈՒՈՒՆՍ ՍՐԲՈՅՑ ԳԵ-
ՈՐԳԱՑ ԶՈՐԱՎԱՐԻ ԵՐԿՆԱՔԱՏԱԿ
ԿԱՄԱՐ-

դ ՕՔ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ Ի ՎԵՐԱՑ ԶՍՈՒՐԲ
ԽՆՉԱ Ի ԲԱՐԵԽՈՍՈՒԹԻՒՆ ՀՕՐԵՂ-
ԲՈՐՆ Ի-

ե ՄՈՅ, ՏԵԱԿՆ ԽԱՉԱՏՐՈՅ ԱՐՀԵՊԻՍ-
ԿՈՊՈՍԻՆ ԳՈՂԹԱՆ ԳԱԻԱՌԻ ԵՒ
ԲԵՄԲԱ-

զ ՍԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ. ՅԻԾԵՑԵՔ Ի ՔՐԻՍ-
ՏՈՍ, Ի ԹՈՒԻՆ ՈՒԺԾԸ (1669): ԱԼԵՔ-
ՍԱՆ¹⁹:

¹⁹ Շահխարտումյանը փակագրված վերջին բառը
կարդացել է ամէն (տե՛ս Օրա «Ստորագրութիւն»...,

Եկեղեցու կառուցման մեկնասներից պարուն Վարդանի հիշատակությունը փորագրված է ներփ հարավ-արևելյան պահ արևմտյան կամադի վրա:

ա ԹԻԾԵՑԵՔ Ի Ք[ՐԻՍՏՈ]Ս ԶՊԱՐՈՒ
Բ ՎԱՐԴԱՆՆ, ՈՐ Է ԵՂԲՈՐ ՈՐԴԻՆ
Գ ՅՈՎՀԱՆՆԵԼՍ Վ[Ա]ՐԴ[Ա]Պ[Ե]ՏԻ,
ԾԻՆՈՂԻ
Ծ[ՈՒՐ]Բ ԵԿԵՂԵՑԻՌՅ ԵՒ ԳԱԼԻԹՈՒ
ԵՒ
ԵՂԲԱՅՈ ԴԱՍԻԹ Վ[Ա]ՐԴ[Ա]Պ[Ե]-
ՏԻՆ՝ ՓՈԽԱՆՈՐ-
ԳԻ ՆՈՐԻՆ, ՈՐ Ի ՀԱԱԼ ԸՆՉԻՑ ԻՒ-
ՐՈՅ ԵՏ
Է ԶԻՆՐԾՆ ԾԻՆՈՒԹԵ[ԱՆ] ԱՅՍ ՍԵԱՆՍ
ԵՒԱԱ: (1)

և ԿԱՄԱՐԻՆ՝ ՅԻԾԱՏԱԿ ՀՈԳՈՅ ԻՒՐՈՅ
թ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ՝ ՀՕՐՆ՝ ԿԱՐԱՊԵՏԻՆ,
ծ ԵՒ ՄՈՐՆ՝ ԹՈՒՐՎԱՆԴԻՆ, ԵՂԲԱՐՑՆ՝
ծա ԶԱՔԲԱՐԻԱՑԻՆ ԵՒ ՄԱՐԳԱՐԵԻՆ ԵՒ
ԿԵ-
ԺՐ ՆԱԿՑԱՑ ՆՈՑԻՆ, ԶԱՐՄԻՑ ԵՒ ԶԱ-
Ի[Ա]Կ[Ա]Ց,
ժգ ԿԵՆԴՈՆԵ[Ա]Ց ԵՒ ՀԱՆԳՈՒՑԵԼՈՑ:
ՈՐՔ ՈՂ[Ո]Ր-
ժո ՄԻ ԱՍԵՔ Տ[Ե]Ր Ա[ՍՏՈՒԱ]Շ ԶԵԶ Ո-
ՂՈՐՄԵՍՑԻ. ԱՄԲՆ:
ժե ԳՐԵՑԱՒ Ի ԹՎԿԻՆ ՌԾԺԹ (1670), ԶԵ-
ՐՈԱՄԲ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ²¹:
Եկեղեցու արևելյան պատի հյուսիսային մասում, բարձրուստ, խաչաքանակից վերև, պահպանվում է հետևյալ ուշգրավ հիշատակագիրը (գծ. 8).
ա Ծ[ՈՒՐ]Բ ԽԱԾՍ ՅԻԾԱՏԱԿ Ի ԾԻՊ
ՂԱՐԱՀԻՍԱՐԻ ՄԻ-
բ ՆԱԱ ՍՍՐԿԱԽԱԳԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ՝
ՅԱԿՈԲԻՆ, ԵՂՋԲԱՀԱՐԻՆ ԵՒ
գ ԵՂԲԱՐՑՆ՝ ՄԵԼՔՈՆԻՆ, ԽՈՒՊԱՍՍ-
ՐԻՆ ԵՒ ԱՄ[ԵՆԱՑՆ] ԿԵՆԴՈՆԵ[Ա]Ց
ե ՀԱՆԳ[Ո]Ւ-
դ ՑԵԼՈՑ. Ի ԹՎԿԻՆ ՌԾԺԹ (1670): ԱԼԵՔ-
ՍԱՄ ՆՈՏԱՐ:

2-րդ, էջ 93—94), մինչեւ այն պետք է վերծանել Ալեքսանդր Արքան նույնացնելով նախորդ արձանագրության մեջ հիշատակիլով հայոց քարտուղար Ալեքսանի հետո: Վերջինն կազմել է այլ արձանագրություններ ևս, որոնք կներկացվեն ստորև: Դրանցից մեկը մեջ Ալեքսանդր կրում է ՆՈՏԱՐ (գրագիր) կոչումը, որը տվյալ դեպքում պետք է համարել ՔԱՐՏՈՒՂԱՐԻ հոմանիշ: Արձանագրությունը որոշ կրասումներով մտել է Վիմական տարբերիք մեջ (էջ 191):

²⁰ Արձանագրությունը հրատարակել է Շահիսարունակը՝ ազատ ընթերցանությամբ (տե՛ս Օքա «Հայորագրութիւն...», հ. 2-րդ, էջ 93), որը մտել է «Ալեքսանդր»-ի (էջ 184) և «Վիմական տարեգրի» մեջ (էջ 191):

Արձանագրությունը գրվել է եկեղեցու կառուցման ավարտման տարում, և պետք է ենթադրել, որ Մինաս սարկավագը ևս աշակեցել է այդ ձեռնարկինանը, և հարազատների հետ արժանացել է հավերջ հիշատակին: Արտեղ հիշատակիլով Ծիպ Ղարաբիսը Շահիսարը մասին գաղափարը է (Հրզրուսի մոտ): Այն Ծիպ Ղարաբիսը է կոչվել հաւ 17-րդ դ. մատենագիր Հակոբ Կարենցու «Տեղագիր վերին հայոց» աշխատության մեջ²¹: Ալիշանի համար այս տեղ-տեղ հողմանարված ու դժվարընթեռների արձանագրությունն ընդորինակել է Մինեն Շմիլյարտյանը, և այն մտել է մեծանուն երախտավորի «Ալեքսանդր»-ի մեջ (էջ 184): Շմիլյարտյանն արձանագրությունն ընթերցել է հիմնավոր աղավանակած, բնագիրն խորթ ու քնածին սրբագրությամբ, և այն ստուգել է մետուկայ տեսքը՝ «Խաչը լիշտակ է Միպողոքու պարկավորն եւ ծնողաց իրոց Պատահին եւ... եսու զՊորիստոն վասն համագուցելուն: Խով էՇԻԹ ասքանագեան»: Մեկնարանություններն ավելորդ են²²:

Հաջորդ վիմագիրը պատփառված երկու տար է՝ ԴՐ (գծ. 9)` փորագրված թմբուկի հարավային պատուհանից վերև, ներսից: Նման ծնուն պատակը էր ճարտարապետի, մեկնաս-կոտորի կամ հրանց հետ առընչվող անձանց անվանագրումը: Սակայն մեր հայունի են թե՛ ճարտարապետները, թե՛ վանիք առաջնորդներն ու թե՛ մեկնաս-կոտորը, և հրանցից ոչ մեկի անոնք չի կարող կազմել ԴՐ հասպալումը: Զեռագրերուն նման ծնուն գրվում է միայն դրա դերանունը, բայց այս դեպքում դրա օգտագործումը անհիման է: Մեր կարծիքով հասպալում է Դ[ԱՏՄԱՒՈ]Ր բառը՝ նկատի ունենալով Տեր Աստծոն, որից արդարություն նայցող հավատացյալը հայացքն ուղղում է դեպի երկինք (թմբուկին)՝ դեպի այդ խորհրդավոր տառերը:

Թմբուկի հարավ-արևելյան լուսամուտից վերև Մատթեոս ավելուարանից բարձրացնեակն է, ձեռքերով կրծքին սեղմած Ավելուարանով: Լուսապասկով զիմի երկու կողմում հասուակ ու պարզ փորագրված է ՄԹ-Մ[ԱՏԹԵՈ]Ր:

Թմբուկի հարավ-արևմտյան պատուհանից վերև տեղադրված է Մարկոս առաջալին խորհրդանշող աղյուծի բարձրացն-

²¹ Տե՛ս «Մամբ ժամանակագրություններ», 13—18-րդ դր., հ. 2-րդ, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 151, 155:

²² Արձանագրությունը նույնացյամբ վերաբարասարկել է Կ. Կոտամանցը («Վիմական տարեգրի», էջ 122):

դակը՝ թաթերի մեջ առած Ավետարանով: Դրան մերձ փորագրված է ՄԱՐԿ[Ո]Ս և մի գեղագիր փակագիր-ծածկագիր (գծ. 12): Եկեղեցու կառուցումն ավարտողի անվան փակագիրը՝ ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱ[ՊԵՏ]

բացվում է ոչ մեծ հժվարությամբ:

Եկեղեցու թմբուկի հյուսիս-արևմտյան պատուհանից վեր եղան բարձրաքանդակն է առջևի ոստքերով «բռնած» Ավետարանով, իսկ նրա տակ գրված է ՂՈՒԿ[Ա]Ս: Հյուսիս-արևելյան լուսամուտի գլխին արծվարձակն է՝ կտուցով պահած Ավետարանը, իսկ դրա երկու կողմում փորագրված է (գծ. 10) Յ[Ո]Հ[Ա]Ն[ԷՒ] Ա[Ի]ԵՏԱՐԱՆի²:

Անձ սրանք են Մոլոնու և Գևորգ եկեղեցու կառուցման տարիներից մեզ հասած փիմագիր հիշատակագրությունները: Անշուշտ ոչադրության են արժանի նաև ավելի ուշ շրջանից պահպանվող արձանագրությունները: Այսպես, եկեղեցու հարավային մուտքի փայտն (կաղնի) դուռ վրա գրված է (գծ. 11): ԱՄՒՆ 1838 Ս[Ե]Պ[ՑԵՄԲԵՐ]. /ՑԻԾԱՏԱԿ է ԱՅՍ ՌՈՒ/ՐՈՒ ԵՐԵՒԱՆՈՒ ՄՈՂՆԻ/ Ս[ՈՒՐՐ]Բ ԳԵՎՈՐԳԻՆ, ԿՆԵՍ-ԶԻ/ ՈՐԴԻ ԳԵՎՈՐԳԻՆ ԵՒ ԿՆՈՉ/Ն ԳԱ-ԻՆԻՆ ԵՒ ՈՐԴԻ Ն[Ո]ՐՐԱ] ՄԻՔ/ԱԻ-Լ[Հ]ԻՆ. Ա[ՍՏՈՒԱ]Ծ[Ա]ՏՈՒՐ Տ[Է]Ր, Ա[Տ]/Հ20ՎՍ ՍՏՈՐԱԳՐԵՑԻ: Ինքնին ուշագրավ է, որ եկեղեցին կոչվում է՝ Երևանու սուրբ Գէորգ՝ Թրիխիսի հովանուն եկեղեցու մետ շշիրելու համար: Այս անվանումը պահպանվել է նոյն տոհմի կողմից արևմտյան մուտքին դրած դուռ աջ փեղկի արձանագրության մեջ ևս, որն է (գծ. 12): ՑԻԾԱՏԱԿ է ԱՅՍ ՌՈՒՐՈՒ ԿՆԵՍՁԵՆՑ/ ԳԵՎՈՐԳԻՆ ՈՐԴԻ ՄԻՔԱԵԼԻՆ, ԿՆՈՉՆ/ /ԳԱԻՆԻՆ, ՌՈՒՍՐՈՒ ԱՆԱԻՆ, ՈՐ ԵՏ/ ԵՐԵՒԱՆՈՒ Ս[ՈՒՐՐ]Բ ԳԵՎՈՐ ՄՈՂ-ՆՈՅՆ 1839. /ԸՍՏՈՐԱԳՐԵՑԻ ԵՍ ՏԻՐԱ-ՑՈՒ Ա[ՍՏՈՒԱ]ԾՍՏՈՒՐ Տ[Է]Ր ՄԾԿԾՐ-ՑԻՉ/ Տ[Է]Ր Ա[ՍՏՈՒԱ]ԾՍՏՈՒՐԵԱՆՑ:

Բեմին կից ձախ ավանդատան մուտքի դուռը ևս պատրաստվել է նոյն տոհմի կողմից, ու թեև այն չի թվագրված, բայց առաջինների ժամանակակիցն է: Նրա արձանագրությունն է (գծ. 13): ՑԻԾԱՏԱԿ է ԱՅՍ ՌՈՒՐՈՒ ԿՆԵՆ/ԶԵՆՑ ԳԵՎՈՐԳԻՆ/, ԱՄԵՆ:

Սյունարանի հարավից երրորդ պահ հյուսիսային ճակատին (գծ. 14): ՄՎ 1860 ԱՄՒ:

Աշտարակցի Սիմեոն Սաժումյանին վերաբերվող առաջին արձանագրությունը փորագրված է եկեղեցու արևմտյան պատին, դրսից, սյունարանի հարավային կամարի տակ, որն է (գծ. 15): ԵԱ ՍԻՄԵՆ ՍԱԺՈՒՄՅԱՆՑ ԱԾՏԱ-ՐԱԿՑԻ, Ի 18[6]6

բ ԱՄԻ, ՀՐԱՄԱՆԱՒ ԱՐԺԱՆԸՆՏԻՐ ՀԱՅ-ՐԱՊԵՏԻՆ ՆԵՐՍԵՍԻ ԿԱՐԳԵՑԱ ՏԵՍՈՒՉ գ ՀԻՆԳԵՐՈՐՈՐԻ ԿԱՐԳԵՑԱ ՏԵՍՈՒՉ ՎԱՆԻՑ Ս[ՈՒՐՐ]Բ դ ԳԵՈՐԳԱՅ, ԶՈՐՊԻՍԻ ՊԱԶՏՈՆ ԶԿՍԻ ՄԱՀՈՒԱՆ:

Ե ՅԻՇԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՑԻ ՀՐԱՄԱՆԱՒ ՍԻՆՈ զ ԹԻ. 1863 ԱՄՎ²³:

Այնուհետև Սիմեոնը կարգվում է նոյն վաճիքի հոգաբարձու և վերանորոգում այն, որի առջիվ սյունարանի թաղակիր կամարի վրա փորագրվում է (գծ. 16): Ի 1868 ԱՄ. ՀՐԱՄԱՆԱՒ ԱՐԺԱՆԸՆՏԻՐ/ ԿԱ-ԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՑՆ ՀԱՅՈՑ, ՏԵ-Ր/ԻՆ ԳԵՈՐԳԱՅ Դ-Ի, ԿԱՐԳԵՑԱՅ ՀՈ/ԳԱ-ԲԱՐՁՈՒ ԱԾՏԱՐԱԿԵՑԻ ՍԻՄԵՆ/ ՍԱ-ԺՈՒՄԵՆԵՑ Ս[ՈՒՐՐ]Բ ԳԵՈՐԳԱՅ ՎԱ-/ՆԻՑ ԵՒ ԱՐԴԵԱՄԲ ՆՈՐԻՆ ՎԵՀԱ-ՓԱ/ՌՈՒԹԵԱՆ ՆՈՐՈԳԵՑԻ ԽԱՆ/ՏԵԱԼ ՏԱՆԻՄՆ ՏԱԾԱՐԻՍ:


Ս. Գևորգի պշարմերին հովանի կանգնած մարմարե տապանաքարի վրա (գծ. 17), ՑԻԾԱՏԱԿ է ԱԾՏԱՐԱԿՈՒ/ ՀԱՍԱ-ՐԱԿՈՒԹՈՒՆԻՑ/ Ի 1893 ԱՄՒ:

ԺԹ դարի վերջերին երևանցի ՄԵԼԻՔ Ա-ՂԱՄԱՋԱՆԻ ՄԽՈԾԾԵՐՈՎ շինարարական աշխատանքներ են կատարվում Մոլոնիում: Այս առջիվ պարապակից սենյակների երկրորդ հարկ տանող աստիճանների պարապետի վրա գրվել է (գծ. 18): ԾՍՆԻՒՔ /ԵՐԵՐԵՒՆ/ԱՆՑԻ Ա/ՂԱՄԱՎԱՐ/ Ա-ՂԱՅԻ ՄԵԼԻՔ /ԱՆԱՄԱՎԱԼԵԱՆՑ. 1895:


Հավանաբար ԺԸ—ԺԹ դարերում Մոլոնու տաճարի ներսում կատարվել են մի շարք որմնանկարներ: Ինչ-որ տեղ նայաշերի ոճն ու գունային համակարգը հիշեցնող այս որմնանկարները մաքրվել ու ամրացվել են 1975 թ. Հուշարձանների վերականգնման Հատուկ գիտա-արտադրական արվեստանոցի նկարչների կողմից, շնորհալի արվեստագետ Կաղեն Ավետիսյանի նեկավարությամբ: Որմնանկարների վրա պահպանվում են ևս ներկով գրված մի քանի համառոտ հիշատակություններ՝ ա Բեմից ձախ, հայրապետական գալազարը ճեղքին, հասակով մեկ կանգնած սրբը որմնանկարի վերնի մասում (գծ. 19): Ս[ՈՒՐՐ]Բ ՆԻԿՈՂԱ[ՑՈՒ] Հ[ԱՅ]ՐՈՒ[Ա]-Պ[ԵՏ]:

բ Բեմի ձախակողմյան որմնամույթի վրա

²³ Առաջին տողում լավ չի քանդակված հայավետին թվատար, սակայն այն պետք է 6 լինի (1868): Ի դեպ, սրանից վերև փորագրված է եղել մի ընդարձակ արձանագրություն, որի տառերը քերվել-հանվել են, և լոկ մի քանի բառեր են ընթերցվում:



ԵՐԱՎՈՐ ԱՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱ - 18.6
ՄԱՐԴՈՒԹՅԱՆ ՎԱՐԱՐԱ ՎԱՐԱՐԱ ՀԱՅԱ
15 ՀԱՐԴՈՒԹՅԻՆ ՎՐԱՎԱՆ ՏԱՐԱ ԿԱՎԱ ՄԻ
ԳԼԻՐ-ԱՅ ՏԱՐԱ ՊԵՐԱ ՀԱ ԱԿԱ ԱՅ
ՅԱԲԱ ՀԱՅԱՆ ՀԱՐԱՎԱ ՎԱՐԱ ՎԱՐԱ
ՊԻ 1863 ԱՐԱ



ԾԱՀԻՒՔ
ԵՐԵՎԱՆԻ
ՂԱՄԱՅՈՒ
ԱՅԻՐԵԿ
Սպահան
ԼԱՏ 1895

Digitized by srujanika@gmail.com

۵۸۷

9

40

۱۷

3 ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

11	ԵՐ 1938 Դ Ա ՅԻ ԵՐԱՄԱՆԱԳՈ ՎԵՐԱԿՐՈՒՅԱԿ ՄԵՐ ԿՐՈՒՅԱԿ ՎԵՐԱԿՐՈՒՅԱԿ ՄԵՐ ԿՐՈՒՅԱԿ ՎԵՐԱԿՐՈՒՅԱԿ ՄԵՐ ԿՐՈՒՅԱԿ ՎԵՐԱԿՐՈՒՅԱԿ ՄԵՐ ԿՐՈՒՅԱԿ	ՏԵՇԱՎԱՐԱՎԱՐԱ ԵՐԱՄԱՆԱԳՈՎԵՐԱ ՎԵՐԱԿՐՈՒՅԱԿ ԵՐԱԿՐՈՒՅԱԿ ՎԵՐԱԿՐՈՒՅԱԿ ԵՐԱԿՐՈՒՅԱԿ ՎԵՐԱԿՐՈՒՅԱԿ ԵՐԱԿՐՈՒՅԱԿ ՎԵՐԱԿՐՈՒՅԱԿ ՄԵՐ ԿՐՈՒՅԱԿ
12	ԵՐԱԿՐՈՒՅԱԿ ՎԵՐԱԿՐՈՒՅԱԿ ԵՐԱԿՐՈՒՅԱԿ ՎԵՐԱԿՐՈՒՅԱԿ ԵՐԱԿՐՈՒՅԱԿ ՎԵՐԱԿՐՈՒՅԱԿ	ԵՐԱԿՐՈՒՅԱԿ ՎԵՐԱԿՐՈՒՅԱԿ ԵՐԱԿՐՈՒՅԱԿ ՎԵՐԱԿՐՈՒՅԱԿ ԵՐԱԿՐՈՒՅԱԿ ՎԵՐԱԿՐՈՒՅԱԿ

ପାତ୍ର
ଅମୁଲ୍ୟବିନ୍ଦୁ
କାହାରେ

21 ՅՌ ՀԱՅԱԿԵՐՄՈՒՆԵՐՆԵՐՆԵՐ
«ԱՅ ՎԱՐԱՐԱԿ»

20 3U

10	1838+ ¹¹ ՏՐԵՄԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ ՄԵՐ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ	ՏՐԵՄԱԿԱՆ ԱՎԵԼ- ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ ՄԵՐ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ	
11	ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ ՄԵՐ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ	12	ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ ՄԵՐ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Գծագրեր

պատկերված է Քրիստոսի համբարձումը:
Կրծքին, ճառագող շրջանկարի մեջ, գըր-
ված է (ած. 20)։ ՅԻՒՍՈՒՍ:

Սեղանատան երկրորդ հարկ տանող աս-
տիճանների պարագանի հարավային ճա-
կատին կա մի կիսաւեց արձանագրություն՝
18-րդ դարից, որն է (գծ. 22). Եղիշէ ԹՌ-
ՌՈՍԵԽԱՆ ԱԱԾԿԵՐՏՑԵՑԻ...

Հայկական միջնադարյան ճարտարապե-

տոլքան վերջին, բայց հշանակալից էջերից մեկը՝ Մուղնու և Գևորգ տաճարը, և հրա որմերի արձանագրությունների այս փոքրիկ խումբը վկապում են ազգային մշակույթին մեր համեմների անմնացորդ ու անքափառ նվիրումի, շնորհների ու կարողությունների մասին։ Գոյստևման համոզմութով, հավերժացման անկանգ մղումով հման ձեռնարկումների իրականացման շնորհիվ է հան, որ դարերի ահագնապուր փորձություններից փրկվել ու մնաց է հասել ազգն ու ազգային մշակույթի կայծկանացող պատրությօք։

Գծագրեր

